# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ «ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՄԸ ՇՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳ» ԹԵՄԱՅՈՎ

**07.01.2025 13:06**

**Հարգելի՛ փաստաբաններ**,

08.01.2025թ. ժամը 18:30-21:30-ին ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում տեղի է ունենալու վերապատրաստման դասընթաց «**Փաստաբանական ծառայության անցումը շրջանառության հարկի համակարգից հարկման ընդհանուր համակարգ**» թեմայով:

**Միաժամանակ տեղեկացնում ենք, որ դասընթացը լինելու է միայն առկա տարբերակով**:

- Դասընթացը կվարի Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ, որակավորված փորձագետ հաշվապահ, Կոհակներ ՓԲԸ-ում գլխավոր հաշվապահ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման դոցենտ, տնտեսագիտական թեկնածու Գաբրիել Միքայելյանը,

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 08.01.2025թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով training.coordinator@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման, Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը,

- Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Դասընթացի արդյունավետությունն ապահովելու համար յուրաքանչյուր դասընթաց կիրականացվի սահմանափակ թվով փաստաբանների մասնակցությամբ: Ուստի, մասնակցության հնարավորություն կունենան առաջին 100 գրանցվածները:

Վերադառնալ
```
$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```